

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ ՓՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լուսինե Թումանյան,

Միջնադարյան Հայաստանի մշակույթի պատմության մեջ առաջնակարգ տեղ են գրավում հայագիր մատյանները: Հայ ժողովրդի համար ձեռագիրը և՛ գիտելիքի աղբյուր է, և՛ պատմամշակութային հուշարձան, և՛ սուրբ մասունք: Ձեռագիրը կարևորագույն դեր ունի հայկական մշակութային ժառանգության մեջ, որովհետև այն արժեքավոր է ոչ միայն իր բազմահարուստ բովանդակությամբ, այլև որպես արվեստի գործ՝ իր գրանյութով, գրչությամբ, մանրանկարչությամբ, խազագրությամբ և, իհարկե, պատմական հավաստի վավերագիր հանդիսացող հիշատակարաններով:

Առհասարակ որևէ ձեռագրի ստեղծման հանգամանքների մասին կարևոր տեղեկություններ է պարունակում տվյալ ձեռագրի հիշատակարանը: Արտաշես Մաթևոսյանը, կարևորելով հիշատակարանների դերը, գրում է. «Հիշատակարանը ներկայացնում էր ձեռագիրը, նրա ծնունդը, ստեղծման հանգամանքները, նպատակը, պատմությունը: Այն ձեռագրի անկապտելի մասն էր, տվյալ ձեռագրի ստեղծման վավերացումը, նրա գրչության հանգամանքների պատմությունը»¹:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները ձեռագրական արձանագրություններ են՝ վկայող ձեռագրի ստեղծման, նրա պատմության, մասնակից անձանց, ձեռագիրն ընդօրինակողի լեզվամտածողության մասին: Գլխավոր հիշատակարանը սովորաբար սկսվում է Սուրբ Երրորդությանն ուղղված փառաբանական աղոթքով՝ Փառք...»-ով: Ապա գրիչները հիշատակարանում նշում են իրենց և ձեռագիրը ծաղկողի անունները, պատվիրատու-ստացողներին և նրանց մերձավորներին, գրանցում ձեռագրի ստեղծման ժամանակը, վայրը, երբեմն հիշում նաև ձեռագրի թուղթը կամ մագաղաթը կոկողին, ներկեր պատրաստողին, գաղափար օրինակ տվողին, ձեռագիրը կազմողին և այլ կարևոր անձանց, ինչպես

¹ **Մաթևոսյան Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, էջ 8:

օրինակ՝ այդ ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջնորդներին: Հիշատակարանները լի են նաև պատմական իրականության նկարագրություններով: Ընդարձակ հիշատակարանները սովորաբար գրվել են ձեռագրի վերջում: Ձեռագրագետ Խաչիկ Հարությունյանը գրում է. «Ընդարձակ հիշատակարաններում փառատրական հատվածին սովորաբար հաջորդում են գովաբանական առանձին տողեր, մակդիրների, համեմատությունների և փոխաբերությունների առատ շարքեր, որոնք գրիչները ձուներում են ընդօրինակված մատյանին՝ նշելով, որ այն գիտելիքի ստացման, հավատի զորացման աղբյուր է՝ նախատեսված իմաստուն, բանիմաց ուսումնասեր և գրքի հարգն իմացող անձանց համար»¹:

Սակայն, ձեռագիրն իր պատմության ընթացքում կարող է ունենալ մի քանի ստացող, մի վայրից տեղափոխվել մեկ ուրիշ վայր, վաճառվել և գնվել, ընծայվել որևէ վանքի կամ եկեղեցու, գերեվարվել թշնամու կողմից և փրկագնով ազատվել, վերանորոգվել և կազմվել երբեմն մեկից ավելի անգամ: Այս մասին մատյանի ազատ հատվածներում հետագա նվիրատուները, ստացողները կամ նորոգողները թողել են իրենց հիշատակությունները. ուստի՝ ձեռագիրն ունենում է նաև հետագայի հիշատակարաններ: Այսպիսով, որևէ ձեռագրի ստեղծման հանգամանքների և անցած պատմության մասին վկայում են ձեռագրի և՛ գրչության ժամանակի, և՛ հետագայի հիշատակարանները:

XIX-XX-դարերում հատկապես վանքերի գրադարաններում ձեռագրի վրա թողնվել են պատկանելությունը փաստող նշումներ: Այսպիսի գրությունների ենք հանդիպում Լիմ մենաստանում, Մշո Սուրբ Կարապետում և այլ հավաքածուների պահվող ձեռագրերում: Այս փոքրիկ նշումները հիշատակություն են, որ փաստում են ձեռագրի պատկանելությունը որևէ ձեռագրատան կամ անհատի: Այս վկայություններով ամբողջանում է ձեռագրի պատմությունը:

Մեծ Եղեռնի ժամանակ տարբեր անձանց կողմից փրկված և բերված որոշ ձեռագրերի էջերին հանդիպում են փոքրիկ վկայություններ փրկության հանգամանքների վերաբերյալ: Նախ նշենք, որ Հայոց Գևորգ Ե. Կաթողիկոսի հրամանով և օրհնությամբ Լիմ մենաստանի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանը 1915 թ. նախաձեռնում է Վասպուրականից ձեռագրերի տեղափոխումը Սուրբ Էջմիածին: Հուլիսյան գաղթի

¹ Հարությունյան Խ., Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 62:

ժամանակ Հովհաննես վանահայրը և Կտուց մենաստանի միաբան Ստեփան վարդապետը Սուրբ Էջմիածին են տանում ձեռագրերի առաջին խմբաքանակը (շուրջ 284 միավոր): Վեհափառի ցուցումով Հովհաննես վարդապետը, Ստեփան վարդապետը, Աղթամարի վանքի միաբան՝ Դանիել վարդապետ Զադոյանը, և Թիֆլիսի Կովկասյան թանգարանից նրանց միացած Սմբատ Տեր-Ավետիսյանը հավաքագրում են Աղթամար, Լիմ և Կտուց կղզիներում մնացած ձեռագրերը, Վարազավանքում գտնվածները, Վանի եկեղեցիներում պահպանվածները և 1916 թ. հունվարին տեղափոխել Սուրբ Էջմիածին (շուրջ 1082 միավոր): Վասպուրականի ձեռագրերի փրկության կազմակերպումից հետո Հայոց Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը նախաձեռնել է Մուշում և շրջակայքում պահվող ձեռագրերի ու մշակութային գանձերի փրկության գործը:

Վասպուրականյան այս մեծ հավաքածուին ավելանում են Հովհաննես վարդապետի՝ Վասպուրականի տարբեր վայրերից գտած ձեռագրերը, գաղթականներից Դանիել վարդապետի հավաքած սակավաթիվ մատյանները: 1916-1918 թթ. ընթացքում Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Մեսրոպ վրդ. Մաքսուդյանը, Ստեփան Կանայանը Վասպուրականից Արևելյան Հայաստան կամ Թիֆլիս հասած գաղթականներից ձեռագրեր են հավաքել²: Այս ձեռագրերից մի քանիսի էջերին Մեսրոպ եպո. Տեր-Մովսիսյանը թողել է փոքրիկ վկայություններ (մանուշակագույն թանաքով, շղագիր)՝ գաղթականների կողմից դրանց բերված լինելու վերաբերյալ: Անդրադառնանք մեր կողմից առանձնացրած այդպիսի մի քանի ձեռագրերի:

1. Եղեռնի ժամանակ փրկված ձեռագրերից է Համշենում՝ Խաչիկ հոր անապատում 1517 թ. ընդօրինակված Ավետարանը (ՄՄ 6018): Գրիչ Հովանես մալազը հիշատակարաններ է թողել յուրաքանչյուր Ավետարանի ավարտին (76ա, 124բ, 208ա, 271ա): Սրանցից վերջինը ունի ընդարձակ հիշատակարան, որը սկսվում է վերոնշյալ կանոնիկ կերպով՝ «Փառք»-ով, ապա գրիչը նշում է իրեն և ձեռագրի պատվիրատուին, գրչության թվականն ու վայրը և այլ հարակից տվյալներ: Ձեռագրի առաջին էջին

¹ Թումանյան Լ., Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Երևան, 2019, էջ 300-305:

² Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Առաջաբան, Օ. Եգանյան, Երևան, 1965, էջ 105:

Մեսրոպ Տեր-Մովսիսյանի թողած նշումից պարզ է դառնում ձեռագրի փրկության պատմությունը՝ Վասպուրականից այն գաղթականները տարել են Թիֆլիս, որտեղ էլ վերցրել է Տեր-Մովսիսյանը. «(1գ, շղագիր) Բերած Մեսրոպ եպ.ի ձեռքով 1918 թ. Թիֆլիզից»:

2. Մեսրոպ եպիսկոպոսի՝ գաղթականներից վերցրած ձեռագրերից է նաև 1462 թ. Վանում հայտնի գրիչ և ծաղկող Կարապետ քահանայի ընդօրինակած Գանձարանը (ՄՄ 5798)՝ ի վայելումն Ատոմ կրոնավորի. «(317բ) Գրեցաւ սուրբ Գանձարանս ի Վան քաղաք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Նախավկայ Սուրբ Ստեփանոսիս եւ Սուրբ Սահակ հայրապետիս, ի ԶԺԱ. (1462) թուականիս մերում»: Ձեռագրի այլ թերթերին կարդում ենք հետագա ստացողների փոքրիկ հիշատակությունները՝ գրված տարբեր ժամանակներում (66ա, 109բ, 112բ, 149ա, 314բ, 317բ): Ձեռագրի պատմությունը մեզ ավանդող հիշատակությունների շարքն ամբողջանում է Մեսրոպ եպիսկոպոսի փոքրիկ վկայությամբ. «(1ա, շղագիր) ԶԺԱ.-1462, Մ. եպ.: Բերած իմ Մ. եպ. ձեռքով Վասպուրականի գաղթականներից, 1918 թ.»:

3. Մարզվանի Սուրբ Աստվածածին եկեղեցում 1625 թ. Միքայել գրիչն ընդօրինակում է Ներսես Շնորհալու «Բանք չափաւ»-ը (ՄՄ 5801): Ձեռագրի 158բ-159ա թերթերում կարդում ենք գրչության հիշատակարանը: Համառոտ «Փառք»-ից հետո գրիչը նշում է ձեռագրի ընդօրինակության վայրը, թվականը, իր և իր ծնողների անունները, նաև ստացողին՝ Քրիստոսատուր ժամկոչին: Ձեռագիրը չունի այլ հիշատակություններ իր հետագա պատմության մասին, սակայն Մեսրոպ եպիսկոպոսի նշումից պարզ է, որ 1915 թ. հուլիսյան մեծ գաղթի ժամանակ այն փրկվել է՝ տարվելով Թիֆլիս. «ՌՀԴ.-1625, Մ. եպս.: Ձեռագիրը բերած է Թիֆլիզ մեծ գաղթի ժամանակ»: Ձեռագիրն այժմ պահվում է Մատենադարանում:

Ներկայացնենք Վասպուրականում պահված մատյաններ, որոնցում առկա են վկայություններ 1916 թ. Դանիել վարդապետի ձեռամբ փրկվելու վերաբերյալ: Դանիել վարդապետի այս գրառումները մատիտով են, շղագիր և դժվարընթեռնելի:

4. Սրանցից մեկը 1469թ. Հովհաննես կրոնավորի ընդօրինակած և ծաղկած Ավետարանն է (ՄՄ 5462)՝ ի վայելումն Հովհաննես տանուտիրոջ: Ձեռագիրը հարուստ է 14 տերունական և չորս ավետարանիչների

պատկերներով, խորաններով, լուսանցազարդերով և զարդագրերով¹: Իր ընդարձակ հիշատակարանը գրիչը սկսել է «Փառք»-ով, ապա նշել ստացողին և նրա ազգականներին, իրեն և յուր մտերիմներին, իսկ վերջում գրել է սխալագրությունների մասին ներողություն հայցող գրիչներին բնորոշ կաղապարային ձևը. «(313ա) Այլեւ սխալանացս եւ խոշորութեան գրոցս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, եւ ես տկար և ձեր անձամբ եւ պանդուխտ կենաք գրեցի զսուրբ Աւետարանս Յոհանիսին յիշատակ...»: Այս ձեռագրի թերթերին պահպանվել են նաև XVI-XVIII դարերի յոթ տարբեր հիշատակարաններ՝ գրված այն անձանց կողմից, որոնց տարբեր ժամանակներում պատկանել է ձեռագիրը (14բ, 152ա, 313բ-314բ): Ի վերջո, ձեռագիրը հանգրվանել է Վանանդում, որտեղից էլ այն վերցրել է Դանիել վարդապետը՝ Վան քաղաքում գրելով իր փոքրիկ հիշատակությունը. «15ա (շղագիր) Սոյն Աւետարանս վերցրի Նորագետի վանուց վանահայրից (Շատախցի): 1916 ապր. 20, Վան, Դանիել վարդապետ միաբան Աղթամարի»:

5. Վասպուրականում Դանիել քահանայի վերցրած ձեռագրերից է Մոկաց Դաշտ գյուղում, Սուրբ Հակոբ Մծբնացու վանքում 1662 թ. Թումա քահանայի ձեռամբ և Տեր Գրիգորի ցանկությամբ գրված և ծաղկված Գրիգոր Նարեկացու Աղթագիրքը (ՄՄ 5852): Ձեռագրի վերջին թերթերին (302բ-306ա) երկարաշունչ «Փառք»-ից հետո գրիչը թվարկում է պատվիրատու-ստացողի և նրա ազգականների անունները, ապա նշում իր անունը, և քանի որ արդեն տեսողությունը թույլ էր, ներողություն է խնդրում սխալագրությունների համար. «(306ա) Այլեւ խոշորութեան եւ սխալանացս անմեղադիր լերուք, զի աչքս ի լուսոյ վատացեր է եւ ձեռաց շնորհն ունայնացեր եւ իմ միտքս եւ խորհուրդս ի խաւարին է, զի ես տկարացեր եմ եւ կար իմ աս է, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. Ամէն»:

Հիշատակարանի մաս կազմող այսպիսի նշումները թեև առնչվում են տվյալ իրականությանը ևս կաղապարային են: Ձեռագրի 3ա էջում Դանիել վարդապետը նշել է. «(սեւ մատիտով, շղագիր) Դանիել վարդապետի հաւաքած ձեռագրերից, 1916, ապր. 20, Վան»: Այս վկայությամբ ամբողջանում է ձեռագրի պատմությունը: Գրչագիրն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

¹ **Գէորգեան Ա.**, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտություն. IX-XVII դդ., Գահիրե, 2005, էջ 212:

6. Ներկայացնենք մի գրչագիր ևս (ՄՄ 5639): Մագաղաթյա այս ձեռագիրը ստեղծվել է Որոտանի Գետաթաղ գյուղում 1673 թ. գրիչ և ծաղկող Ղուկասի ձեռամբ: Պատվիրատու-ստացողը Ովանես կրոնավորն է. «(212բ-213ա) Դարձյալ յիշեցէք զՂուկաս մեղաւոր գծողս, որ բազում ջանիս գրեցի եւ ծաղկեցի զսուրբ Աւետարանս յերկիրս Որոտան, ի գեօղս Գետաթաղ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի խնդրոյ Ովանէս կրօնաւորին, ի ՌՃԻԲ. (1673) թվին»: Ձեռագիրն ունի բարձրաքանդակ արծաթյա կրկնակազմ՝ 1767թ. փորագրությամբ:

Հիշատակարանային տվյալների բացակայության պատճառով չենք կարող ասել, թե հետո որտեղ է հայտնվել այս Ավետարանը: Իր փրկության հիշատակարանից մի շատ կարևոր փաստ է հայտնի՝ Եղեռնի նախօրեին այն գտնվել է Կարինի Ծիթող (Ձիաթող) գյուղում, պատկանել տեղի Աշոտ քահանային. «(213բ) Կարնոյ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մեջ գտնուած ապրանքների մէջ Ծիթող գիւղի տէր Աշոտ քահ[անայի] արկղից հանւեց այս սուրբ ձեռագիր Աւետարանը 1916 թ. ապրիլի 6-ին եւ յանձնուեց նորին Վեհափառութեան Մայր Աթոռի Մատենատարանի մեջ պահելու համար: Ռ. ք. Բէկգիլեան»: Ձեռագիրն այժմ պահվում է Մատենադարանում: Նշենք, որ Կարինի (Էրզրումի) շրջանը Արևմտյան Հայաստանում ձեռագրերով ամենահարուստ շրջաններից էր, սակայն այնտեղից փրկվել են շատ սակավաթիվ ձեռագրեր. Սանասարյան հավաքածուի մի մասը՝ 69 ձեռագիր¹: Սրանց հավելում ենք մեր ներկայացրած գրչագիրը:

7. Հայ ձեռագրական արվեստի ամենափոխ նմուշներից է ճարտարապետ, քանդակագործ, գրիչ և ծաղկող Մոմիկի ստեղծած մատյանը (ՄՄ 6792): Այս Ավետարանն ընդօրինակվել է 1302 թ. Սյունիքում, Ստեփանոս Օրբելյանի պատվերով²: Այն ունի ճոխ նկարազարդում՝ 12 տերունական պատկերներ և այլ մանրանկարներ: 1406 թ. ձեռագիրը հասել է Գրիգոր Խլաթեցուն, ով այն նորոգել է և ըստ արժանվույն գնահատել: 1411 թ. այն ստացել է Հովհաննես երեցը Արծկեի շրջանից, իսկ ավելի ուշ ընծայվել է Վասպուրականի Մեծփավանքին, ինչի մասին վկայում է

¹ **Քոլանջյան Ս.**, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին» ամսագիր, 1966, թիվ Ը, էջ 35-36: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Առաջաբան, հեղ.՝ Եգանյան Օ., Երևան, 1965, էջ 158:

² **Մաթևոսյան Կ.**, Մոմիկ, Երևան, 2010, էջ 22-28:

փոքրիկ հիշատակագրությունը. «Յիշատակ է Սբ. Աւետարանս Պատերազմի ի դուռն Մեծօփա Սբ. Աստուածածնի»: Մոմիկյան այս մատյանը ստացել է «Պատերազմի» Ավետարան անունը: 1915 թ. Եղեռնից փրկվելով՝ ձեռագիրը տարվել է Բաքու, ապա հանգրվանել Սուրբ Էջմիածնում, իսկ այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Ձեռագրի կազմաստառին փակցված թղթին կարդում ենք. «Բագու, Թուրքիստանի առաջնորդից (Գ. Հ. խ.-ի միջոցով ստացուած). I, 25 թ.»:

8. 1643 թ. Սեբաստիայում Հովհաննես գրիչը Սարգիս Անմեղուկենցի պատվերով ընդօրինակում է Կանոնագիրք: Այս ձեռագիրը 1893 թ. Պետրոս եպիսկոպոս Սեբաստացու կողմից ընծայվում է Սեբաստիայի Սուրբ Նշան վանքին և պահվում վանքի ձեռագրատանը (հմր. 165) մինչև Մեծ Եղեռնը¹: Այն Սուրբ Նշան վանքի ձեռագրական մեծ հավաքածուից փրկված եզակի մի մատյան է: Ձեռագրի Ա. և Բ. կազմաստառներին փակցված թղթերի հիշատակագրություններից պարզ է դառնում, որ 1916-1919 թթ. պրոֆեսոր Սարգիս Սողիկյանը Կարինից տարագրված էր Սեբաստիա և այնտեղ շարունակում էր իր ուսուցչական գործունեությունը կոտորածից փրկված հայ մանուկների հետ, և աշակերտներից մեկը, ի նշան երախտագիտության, ուսուցչին է հանձնում այս Կանոնագիրքը²: Սարգիս Սողիկյանի որդի Արսեն Սողիկյանը ձեռագիրն իր հետ տարել է Նյու-Յորք, ուր այն մտել է Հարություն Հազարյանի հավաքածու: 1975 թ. Հարություն Հազարյանը մատյանը նվիրել է Մաշտոցի անվան Մատենադարանին (ՄՄ 10682)³:

Ամփոփելով ասենք, որ ձեռագրերի փրկությանը և առհասարակ նրանց պատմությանը վերաբերող անգամ ամենահամառոտ գրությունները և հիշատակությունները, լինեն դրանք գեղագիր թե դժվարընթեռնելի, թանաքով թե մատիտով, ունեն կարևոր նշանակություն՝ ամբողջացնելու համար տվյալ ձեռագրի պատմությունը և հայ ժողովրդի անցած ուղին:

¹ Յուզակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուցի Սեբաստիա, կազմ. Թորգոմ արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, էջ109:

² Սույն ձեռագրին մեր ուշադրությունը հրավիրել է ձեռագրագետ, պ.գ.թ. Նարինե Վարդանյանը:

³ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, կազմ.՝ Մալխասյան Ա., Երևան, 1998, էջ 10, 20:

ЗАМЕТКИ В РУКОПИСЯХ ОБ ИХ СПАСЕНИИ ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА*Լուսине Կումանյան*

Наша статья посвящена тем рукописям, на страницах которых есть записи об их спасении во время Геноцида. Для армянского рукописного искусства характерны колофоны, благодаря которым становится ясно, когда и где они были написаны, выявляются имена писцов и иллюстраторов. В этих же рукописях встречаются кофоны, написанные позже. Они рассказывают нам о дальнейшем пути этой рукописи. На страницах некоторых рукописей сохранились небольшие записи, свидетельствующие об их спасении во время геноцида армян. В этой статье рассматриваются восемь из них.

NOTES IN MANUSCRIPTS ABOUT THEIR SALVATION DURING THE GENOCIDE*Lusine Tumanyan*

Our article is devoted to those manuscripts, where on their pages you can find information how they were saved during Genocide. Colophons are typical for an Armenian manuscript art, with the help of them it becomes clear when and where they were written, who was scribe, painter. In the same manuscripts there can be another colophons or notes written later. On the pages of some manuscripts there are notes that testify to their salvation during the Armenian Genocide. Eight of them are considered in this article.

Լուսինե Կումանյան - պատմ. գիտ. թեկն., Մաշտոցի անվան Մատենադարանի պլագ
գիտաշիտարող, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս
tumanyan.lusi@gmail.com

Լուսինե Կումանյան - кандидат исторических наук, старший сотрудник Матенадарана-
института древних рукописей имени Месропа Маштоца, преподаватель Факультета
Богословия ЕГУ

Lusine Tumanyan - PhD in History, Senior researcher of Matenadaran - Institute of Ancient
Manuscripts after Mesrop Mashtots, Lecturer at the YSU Faculty of Theology